

գիլելով եւ համոզելով թէ ուղղահաւատ
 մահմետականի համար ճշդ է անհաւատի
 լեզուաւ խօսիլ: Ասի հին հնարք մըն է
 վերջնականապէս թուրքախօս դարձնելու
 մահմետականացած հայը, յոյնը, լազը,
 քուրդը եւն: Բոխ նկարագրական միջադէպ
 մը կը պատմէ Արդուինի մահմետականա-
 ցած վրախօսներու բերնէն, որոնք կը ցաւ-
 էին թէ ստիպուած են այսպիսի մեղք մը
 գործելու, քանի որ այն լեզուն մօր կաթին
 հետ ծծած են. բայց քանի որ իսլամու-
 թեան «*սո-րէ լեզուն՝ լու-րտերէնն ալ գե-
 պէն*», կը յուսան թէ իրենց մեղք չի հա-
 մարուիր զրախտին մէջ, եւ «Աստուծոյ եւ
 հրեշտակաց անհասկանալի չին մնար»
 (Բոխ, էջ 167): Այսպիսի բմբռնմանց
 տարածուելուն արդիւնքն եղած է ամէն
 տեղ լեովին թուրքախօս դառնալը, ինչպէս
 եղած է Արդուինի շրջակայքը՝ բոլոր մահ-
 մետականացածներու մէջ: Սակաւահող
 դաւառներու մէջ ի հարկէ տարածուած
 պանդխտու թիւեր, զինուորական ծառայու-
 թիւնն եւ նման պարագայք արական դա-
 սակարգը շփման մէջ կը դնեն թուրք տար-
 ըին հետ մեծ կենդրոններու մէջ (Կ. Պոլիս
 եւն): Եւ ասի կ'ազդէ անոնց թրքախօս